ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/53, 06.04.2022թ.

Շտկման ամսաթիվը՝ 11.04.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «SW/EEK-04»

Գնման առարկան՝ մանկապարտեզների սեյսմիկ ամրացման, էներգաարդյունավետության բարելավման և վերակառուցման ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «SW/EEK-04» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում,
2. դադարեցնել «Արփա-Սևան» ԲԲԸ և «Օպտիմում Էներջի» ՍՊԸ կոնսորցիումին հաղթող ճանաչելու վերաբերյալ որոշումը,
3. հաղթող ճանաչել «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ֆ. ՄԱՆԳՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձին

Բողոքաբեր՝
«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ից
գրանցման համար՝ 282.110.06637
գտնվելու վայրի հասցե՝ ք. Երևան,
Ա. Ահարոնյան փող., շ. 5, բն. 43, 0052

Ներկայացուցիչ՝ Հարություն Օհանյան
նույնականացման քարտի տվյալներ՝ 011778511,
տրված 09.08.2021թ.-ին, 004-ի կողմից

Պատվիրատու՝
Երևանի քաղաքապետարան
հասցե՝ ք. Երևան, Արգիշտու փող., շ. 1, 0015

ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
SW/EEK-04
Մանկապարտեզների սեյսմիկ ամրացում,
էներգաարդյունավետության բարելավում և վերակառուցում

ԲՈՂՈՔ

I. Գործի նախապատմությունը.

2021թ. դեկտեմբերի 04-ին Երևանի քաղաքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) փոխանցել է Հայտի ներկայացման հրավեր (այսուհետ նաև՝ Հրավեր), որի համաձայն՝ Պատվիրատուն հրավիրում է ընկերությունների՝ ներկայացնելու փակ ծրարներով հայտեր Երևան քաղաքի թիվ 156 մանկապարտեզի սեյսմիկ ամրացման, էներգաարդյունավետության բարելավման և վերակառուցման աշխատանքների կատարման համար (այսուհետ նաև՝ Գնում):

Աշխատանքների ավարտման ժամկետ է 18 (տասնութ) ամիսը:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է նշվել 2022թ. հունվարի 21-ը՝ ժամը 15:00-ն:

Բողոքաբերը ներկայացրել է Գնմանը մասնակցելու հայտ՝ պահանջվող փաստաթղթերով հանդերձ:

Բողոքաբերի հայտը ենթարկվել է գնահատման, մերժվել է:

II. Բողոքի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1) Հրավերով սահմանված պահանջներ են, ի թիվս այլոց, վերջին հինգ տարիների ընթացքում կնքված նմանատիպ պայմանագրերի առկայություն՝ 355,000,000 ՀՀ դրամի չափով (տե՛ս Հրավերի 2-րդ կետ):

2) Ի հաստատումն այդ պահանջի բավարարման՝ Բողոքաբերը ներկայացրել է իր և «Ղարաբաղցյան-Շին» ՍՊԸ միջև 23.06.2017թ. կնքված Շինարարական աշխատանքների ենթակապալի թիվ 01 պայմանագիրը, որի համաձայն՝ Բողոքաբերը՝ որպես ենթակապալառու, պարտավորվել է իր միջոցներով և նյութերով կատարել ՀՀ ք. Երևանի Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 դպրոցի շինարարական աշխատանքները: Պայմանագրի գինը կազմում է 1,210,577,514 (մեկ միլիարդ երկու հարյուր տասը միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար հինգ հարյուր տասնչորս) ՀՀ դրամ: Համաձայն 25.09.2019թ. Շինարարական աշխատանքների ավարտական ակտի՝ աշխատանքները կատարվել են նախագծային առաջադրանքներին համապատասխան, նորմատիվ ակտերով սահմանված որակով և համարվում են ավարտված: Պայմանագրի վերջնական արժք է սահմանվել 1,230,392,828 (մեկ միլիարդ երկու հարյուր երեսուն միլիոն երեք հարյուր իննսուներկու հազար ութ հարյուր քսանութ) ՀՀ դրամ: Այս աշխատանքների մասով դուրս է գրվել 19 (տասնինը) հարկային հաշիվ, որոնց մեջ աշխատանքների անվանում է նշված Երևանի Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 դպրոցի կառուցումը, աշխատանքներ կատարող է նշված Բողոքաբերը, իսկ աշխատանքներ ընդունող՝ «Ղարաբաղցյան-Շին» ՍՊԸ-ն:

3) Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին (այսուհետ նաև՝ Հիմնադրամ) 08.02.2022թ. ուղղված թիվ 01/2728 գրությամբ Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը խնդրել է հաստատել, որ՝

ա. Բողոքաբերն է իրականացրել Երևանի Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 դպրոցի կառուցման աշխատանքները և որպես ենթակապալառու՝ հաստատվել է պայմանագրի պայմանների համաձայն պատվիրատուի՝ Հիմնադրամի կողմից,

բ. հաստատել շինարարության ավարտական ակտում Բողոքաբերի ստորագրության առկայությունը:

4) Երևանի քաղաքապետի 08.02.2022թ. թիվ 01/2728 գրությանն ի պատասխան՝ Հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Սողոմոնյանը իր 14.02.2022թ. Ե/01/251-22 գրությամբ նշել է, որ՝

ա. Իր և «Ղարաբաղցյան-Շին» ՍՊԸ միջև 21.06.2017թ. կնքվել է Երևան քաղաքի Ռ. Իշխանյանի անվան թիվ 153 հիմնական դպրոցի կառուցման մասին թիվ A-01YN պայմանագիրը,

բ. Բողոքաբերը՝ որպես ենթակապալառու, չի հաստատվել իր կողմից, ինչից ելնելով ինքը չի կարող հավաստել վերջինիս կողմից իրականացրած աշխատանքների չափը և կատարումը,

գ. Շինարարության օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտում նշված չէ Բողոքաբերի անվանումն ու ստորագրությունը, ուստի ինքը չի կարող հաստատել ներկայացված ավարտական ակտում Բողոքաբերի ստորագրությունը:

5) Համաձայն Բողոքաբերին պրոյեկտի պատասխանատու Նորա Մարտիրոսյանից հասցեագրված էլեկտրոնային նամակի՝

ա. Գնմանը մասնակցել են Բողոքաբերը, ինչպես նաև «Արփա-Սևան» բաց բաժնետիրական և «Օպտիմում Էներջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները՝ համատեղ գործունեության կարգով,

բ. Բողոքաբերը գնման գին է առաջարկել 416,843,464.91 ՀՀ դրամը, իսկ «Արփա-Սևան» բաց բաժնետիրական և «Օպտիմում Էներջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները՝ համատեղ գործունեության կարգով՝ 517,748,766.91 ՀՀ դրամ,

գ. Գնման հաղթող են ճանաչվել «Արփա-Սևան» բաց բաժնետիրական և «Օպտիմում Էներջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները՝ համատեղ գործունեության կարգով:

դ. Բողոքաբերի հայտն ըստ էության չի համապատասխանում մրցութային փաստաթղթի (the bidding document) պահանջներին: Բողոքաբերը որակազրկված է. Բողոքաբերի կողմից տրամադրված տեղեկատվությունը համարվել է ոչ հավաստի, և համաձայն Հայտատուներին տրված ցուցումների (Instructions to bidders, ITB, այսուհետ նաև՝ Ցուցումներ) 29.4 և 30.2 կետերի՝ նրա հայտը մերժվում է՝ որպես պահանջներին ըստ էության չհամապատասխանող:

ե. Համաձայն Ցուցումների 39.1 կետի՝ անգործության ժամկետը 10 (տասը) օր է, լրանում է 2022թ. ապրիլի 11-ին:

6) Հայտի մերժման հիմքերի պարզաբանման մասին Բողոքաբերի խնդրանքին ի պատասխան՝ պրոյեկտի պատասխանատու Նորա Մարտիրոսյանը հղում է արել Երևանի քաղաքապետի և Հիմնադրամի գործադիր տնօրենի վերոնշյալ գրություններին:

7) Ցուցումների 29.4 կետը սահմանում է. «Եթե հայտը ըստ էության չի համապատասխանում Մրցութային փաստաթղթի պահանջներին, ապա այն պետք է մերժվի Պատվիրատուի կողմից և հետագայում չի կարող համապատասխանող ճանաչվել նյութական բնույթի շեղումների, վերապահումների կամ բացթողումների ուղղման միջոցով»:

Ցուցումների 30.2 կետը սահմանում է. «Պայմանով, որ հայտը էականորեն արձագանքող է՝ Պատվիրատուն կարող է Հայտատուից պահանջել ողջամիտ ժամկետում ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն կամ փաստաթղթեր՝ փաստաթղթային պահանջների հետ կապված Հայտի ոչ էական անհամապատասխանությունները շտկելու համար: Նման անհամա-պատասխանությունների վերաբերյալ տեղեկություններ կամ

փաստաթղթեր պահանջելը չպետք է կապված լինի Հայտի գնի հետ: Հայտատուի կողմից պահանջը չկատարելը կարող է հանգեցնել նրա հայտի մերժմանը»:

8) Համաձայն Ցուցումների 38.1 կետի՝ Պատվիրատուն հաղթանակը շնորհում է այն հայտատուին, ում առաջարկը որոշվել է որպես ամենացածր գնահատված հայտ և ըստ էության համապատասխանում է մրցույթի պահանջներին՝ պայմանով, որ Հայտատուն որոշվի, որ որակավորված է Պայմանագիրը պատշաճ կերպով կատարելու համար:

III. Բողոքի հիմքերն ու հիմնավորումները.

Այսպիսով, Պատվիրատուն հայտը մերժել է այն հիմնավորմամբ, որ Բողոքաբերի՝ նախկինում պահանջվող նմանատիպ պայմանագիր կնքած լինելու մասին ներկայացված տեղեկատվությունը հավաստի չէ. առկա է ենթակապալի պայմանագիր, որում նշված տեղեկությունները, Բողոքաբերի ստորագրությունը չեն կարող հավաստվել Հիմնադրամի կողմից: Հետևաբար՝ Բողոքաբերի հայտը ենթակա է մերժման:

Համարելով այս պնդումը անհիմն ու Բողոքաբերի ներկայացրած տեղեկությունները՝ հավաստի՝ այս առումով նշենք մեր հակափաստարկները.

ա. Առկա են վավեր ենթակապալի պայմանագիր՝ կնքված Բողոքաբերի և «Ղարաբաղցյան-Շին» ՍՊԸ միջև, շինարարական աշխատանքների վավեր ավարտական ակտ, վավեր հարկային հաշիվներ, որոնք դուրս են գրվել Բողոքաբերի կողմից և ուղղված են «Ղարաբաղցյան-Շին» ՍՊԸ-ին, դրանցում նշված աշխատանքն է թիվ 153 դպրոցի կառուցումը:

Այս հանգամանքները բավարար են արձանագրելու, որ համապատասխան աշխատանքները կատարվել են Բողոքաբերի կողմից: Հետևաբար՝ շինարարության պահանջվող փորձի առկայության, ինչպես նաև նախկինում կնքված պայմանագրի սահմանված արժեքին համապատասխանելու պահանջները բավարարվել են Բողոքաբերի կողմից, և այն, որ այդ գործողությունները Բողոքաբերի կողմից կատարվել են ենթակապալառուի կարգավիճակով, չի կարող հիմնավորել ներկայացված պահանջներին Բողոքաբերի անհամապատասխանությունը (չկա որևէ սահմանափակում առ այն, որ քննարկվող աշխատանքները պետք է կատարված լինեին միայն կապալառուի կարգավիճակում):

բ. Պետք է արձանագրել, որ ՀՀ Կառավարության կողմից ստեղծված հիմնադրամը, համաձայն դրա կանոնադրության (հաստատվել է ՀՀ Կառավարության 01.04.2015թ. թիվ 1521-Ն որոշմամբ), չունի իրավասություն ո՛չ հաստատելու այս կամ այն շինարարություն իրականացնող մասնակցությունը կառուցապատման գործընթացներին, ո՛չ հավաստելու որևէ փաստաթղթերում (այդ թվում՝ ավարտական ակտերում) դրված ստորագրությունների իսկությունը: Ուստի անհասկանալի է, թե ինչու է Երևանի քաղաքապետը նման հարցադրումներով դիմել Հիմնադրամին:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Հիմնադրամը կատեգորիկ կերպով չի ժխտել Բողոքաբերի հայտնած տեղեկությունները, այլ միայն հայտնել է, որ չի կարող հաստատել դրանք:

Այսպիսով, Բողոքաբերը ներկայացրել է բավարար ապացույցներ՝ հաստատելու, որ ինքը բավարարում է ներկայացված պահանջներին: Ու քանի որ Բողոքաբերը ներկայացրել է Գնման ամենացածր գինը, ապա, համաձայն մրցութային փաստաթղթի մաս համարվող Ցուցումների 38.1 կետի, նրան պետք է ճանաչել Գնման հաղթող:

Իմիջիայլոց, պետք է նշել, որ Գնման գործընթացի փաստաթղթերը ներկայացված են եղել անգլերենով այն դեպքում, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի և «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի կարգավորումներից բխում է, որ դրանք պետք է լինեին հայերեն, կամ գոնե պետք է ապահովվեր հայերեն և անգլերեն տեքստերի միաժամանակյա առկայությունը:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով Օրենքի 46-րդ, 50-րդ հոդվածներով և հրավերի **հրավերի 42-2 կետով**.

Խնդրում ենք՝

- պարտավորեցնել SW/EEK-04 ծածկագրով գնման ընթացակարգով պատվիրատու Երևանի քաղաքապետարանին այդ գնման ընթացակարգով հայտատու, բողոքաբեր «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը վերացնել,
- պարտավորեցնել SW/EEK-04 ծածկագրով գնման ընթացակարգով պատվիրատու Երևանի քաղաքապետարանին այդ գնման ընթացակարգով հայտատու «Արփա-Սևան» ԲԲԸ և «Օպտիմում Էներջի» ՍՊԸ կոնսորցիումին հաղթող ճանաչելու մասին որոշումը վերացնել,
- պարտավորեցնել SW/EEK-04 ծածկագրով գնման ընթացակարգով պատվիրատու Երևանի քաղաքապետարանին այդ գնման ընթացակարգով հայտատու, բողոքաբեր «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ին ճանաչել այդ գնման ընթացակարգի հաղթող:

Միջնորդություն

Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի և «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի կարգավորումներով խնդրում ենք, պատվիրատուից՝ Երևանի քաղաքապետարանից պահանջել հրավերի և հրավերի շրջանակներում կազմված բոլոր փաստաթղթերի հայերեն օրինակները:

Կից ներկայացնում եմ՝

1. Բողոքաբերին ներկայացված հայտի ներկայացման հրավերի պատճենը,

2. Բողոքաբերի և «Ղարաբաղցյան-Շին» ՍՊԸ միջև 23.06.2017թ. կնքված Շինարարական աշխատանքների ենթակապալի թիվ 01 պայմանագրի, դրա հիման վրա դուրսգրված հարկային հաշիվների և կատարողական ակտերի պատճենները,

3. Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանի 08.02.2022թ. ուղղված թիվ 01/2728 գրության պատճենը,

4. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Սողոմոնյանի 14.02.2022թ. Ե/01/251-22 գրության պատճենը,

5. Հայտատուներին տրված ցուցումների (Instructions to bidders, ITB, այսուհետ նաև՝ Ցուցումներ) պատճենը,

6. Պրոյեկտի պատասխանատու Նորա Մարտիրոսյանի՝ Բողոքաբերին ուղղված էլեկտրոնային նամակների տպված տարբերակը:

7. Լիազորագրի և անձը հաստատող փաստաթղթերի արտատպումները բնօրինակից,

8. Բողոքի վճարի վերաբերյալ անդորրագրի արտատպումը բնօրինակից:

«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ
ներկայացուցիչ Հարություն Օհանյան

Digitally signed by
OHANYAN HARUTYUN